# Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 15 (418) 17-30 սեպտեմբեր, 2017թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am


## Խմբագրական

### Ի խնդիր հայկական աշխարհի անվտանգության ու զարգացման

Վերջին երկու շաբաթների ընթացքում քաղաքական իրադարձություններն իրար հաջորդեցին բավականին սրընթաց:

Նախ՝ տեղի ունեցավ Հայաստան-Սփյուռք 6-րդ համագումարը, համագումարը դեռ չավարտված՝ ՀՀ ու Ադրբեջանի նախագահները ելույթ ունեցան ՄԱԿ-ի ամբիոնից, նույն ընթացքում հանդիպեցին երկու երկրների ԱԳ նախարարները, ԱՄՆ-ի Միչիգան նահանգը ճանաչեց Արցախի անկախությունը, Արցախում ձեւավորվեց կառավարություն եւ, փաստորեն, գործնականում երկրի կառավարման համակարգը փոխվեց: Այս բոլորը հայկական իրականությանն ուղղակի առընչվող խնդիրների շարքից:

Միջազգային առումով հիշատակելի են դեռեւս շարունակվող՝ «Ադրբեջանի լվացքատան» շղթայական բացահայտումներն ու սպասվելիք հետեւանքները, իսկ առավել կարեւոր իրադարձությունները Քուրդիստանի եւ Կատալոնիայի անկախության հանրաքվեներն են ու դրանց հաջորդող հավանական զարգացումները:

Այս բոլոր իրադարձություններին համապարփակ դիտանկյունից նայելով՝ տեղին է մատնանշել, որ համաշխարհային բեմահարթակում հակումները դեպի հայանպաստ մտածողություն առավել շեշտակիացել են: Իսկ դրա հետեւանքով հայկական դիրքորոշման կարծրացումն ու տարածաշրջանային մակարդակում նոր դերի ստանձման կարելիության առիթից օգտվելը հրամայական է դառնում:

Ընդհանուր առմամբ՝ հենց այդ ուղու վրա է հայկական արտաքին քաղաքականությունը: Հայկական կողմի դիրքորոշումների կարծրացմանը ականատես եղանք ՀՀ Նախագահի ելույթում ՄԱԿ-ի ամբիոնից, հատկապես Արցախի հարցով՝ «Արցախի Հանրապետությունը չի կարող ունենալ ավելի ցածր կարգավիճակ եւ վայելել ավելի քիչ ազատություն, քան այսօր ունի» արտահայտությամբ, իսկ տարածաշրջանային առումով, փաստորեն, վերջնաժամկետ ներկայացնելով Թուրքիային հայ-թուրքական արձանագրությունների առ ոչինչ հայտարարելու մտայնությամբ: Այս երկու ուղղություններում ՀՀ նախագահի ելույթը կարելի է համարել անկյունադարձային, որով եւ հայտ է ներկայացվում նոր դերակատարություն ստանձնելու համար:

Մյուս կողմից, ականատեսը եղանք Արցախի արտաքին գործերի նախարարության հայտարարությանը՝ Իրաքի Քուրդիստանի անկախության հանրաքվեի կապակցությամբ, որտեղ փաստորեն Արցախը ողջունեց քուրդ ժողովրդի զարգացման ուղին ինքնուրույն ընտրելու իրավունքի իրացման ակտը:

Այսպիսով, փաստորեն Հայաստանը հայտ է ներկայացնում տարածաշրջանային իրադարձությունների առնչությամբ դերակատարություն ստանձնելու համար: Պետք է հաշվի առնել, որ այդ առումով հայության ներուժը պատկառելի է: Հայությունը կարող է առարկայական ներկայություն ունենալ երկու պետություններով՝ ի դեմս Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների, եւ Սփյուռքով:

Մնում է կարողանալ ճիշտ եւ տեղին օգտագործել հայկական ներուժը՝ ի խնդիր հայկական աշխարհի անվտանգության եւ զարգացման:

## Նախագահի հրամանագրով՝ նոր կառավարություն

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը սեպտեմբերի 25-ին ստորագրել է մի շարք հրամանագրեր:

Նախագահի հրամանագրով սահմանվել է կառավարության հետեւյալ կառուցվածքը.

պետական նախարար, առողջապահության նախարարություն, արդարադատության նախարարություն, արտաքին գործերի նախարարություն, աշխատանքի, սոցիալական հարցերի եւ վերաբնակեցման նախարարություն, բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարարություն, գյուղատնտեսության նախարարություն, էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների նախարարություն, կրթության, գիտության եւ սպորտի նախարարություն, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարարություն, պաշտպանության նախարարություն, քաղաքաշինության նախարարություն, ֆինանսների նախարարություն:

Սահմանվել են նաեւ պետական կառավարման այլ մարմիններ՝ ազգային անվտանգության ծառայություն, ոստիկանություն, արտակարգ իրավիճակների պետական ծառայություն:

Նախագահի հրամանագրով նշանակվել են. պետական նախարար՝ Արայիկ Հարությունյանը, առողջապահության նախարար՝ Կարինե Աթայանը, արդարադատության նախարար՝ Արարատ Դանիելյանը, արտաքին գործերի նախարար՝ Մասիս Մայիլյանը, աշխատանքի, սոցիալական հարցերի եւ վերաբնակեցման նախարար՝ Սամվել Ավանեսյանը, բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարար՝ Վազգեն Միքայելյանը, գյուղատնտեսության նախարար՝ Ժիրայր Միրզոյանը, էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների նախարար՝ Լեւոն Գրիգորյանը, կրթության, գիտության եւ սպորտի նախարար՝ Նարինե Աղաբալյանը, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարար՝ Սերգեյ Շահվերդյանը, պաշտպանության նախարար՝ Լեւոն Մնացականյանը, քաղաքաշինության նախարար՝ Կարեն Շահրամանյանը, ֆինանսների նախարար՝ Գրիգորի Մարտիրոսյանը:

Ըստ Նախագահի հրամանագրերի՝ սահմանվել են այն նախարարների կազմը, որոնց գործունեությունը համակարգվելու է պետական նախարարի կողմից, ինչպես նաեւ՝ պետական սեփականության եւ ֆինանսների կառավարման ոլորտում նախագահի կողմից պետական նախարարին վերապահված լիազորությունների շրջանակը:

Նախագահի մեկ այլ հրամանագրի համաձայն՝ տեղի են ունեցել մի շարք կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես.

Էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների նախարարությունից առանձնացվել է զբոսաշրջության վարչությունը եւ ընդգրկվել մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարարություն կազմում:

Նախագահի աշխատակազմի կառուցվածքում ստեղծվել է «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում, որը նախկին կառավարության աշխատակազմի իրավահաջորդն է:

Նախկին կառավարության աշխատակազմի որոշ ստորաբաժանումներ ընդգրկվել են տարբեր մարմինների կազմում.

Պետական նախարարի աշխատակազմում են ընդգրկվել սոցիալ-տնտեսական վարչությունը, ինչպես նաեւ տարածքային կառավարման բնագավառում գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները:

Էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների նախարարության կառուցվածքում են ընդգրկվել անշարժ գույքի կադաստրի եւ պետական գույքի կառավարման վարչությունները, գեոդեզիայի եւ հողային պետական տեսչությունը:

Աշխատանքի, սոցիալական հարցերի եւ վերաբնակեցման նախարարության կառուցվածքում են ընդգրկվել բնակարանային հարցերի վարչությունը, վերաբնակեցման եւ միգրացիայի բաժինը:

Նոր գործառույթներին համապատասխան հաստատվել են Նախագահի աշխատակազմի, ինչպես նաեւ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանման կանոնադրությունները եւ կառուցվածքները:

Նախագահի մեկ այլ հրամանագրով սահմանվել է կառավարության գործունեության կազմակերպման նոր կարգ:

Նույն օրը Նախագահը ստորագրել է հրամանագրեր, համաձայն որոնց՝ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Արայիկ Լազարյանը նշանակվել է Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ: Արդարադատության նախարարի տեղակալ Կարեն Դանիելյանը նշանակվել է Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ-պետահիրավական վարչության պետ:

## ԼՂՀ կառավարության կազմը

*Արայիկ Հարությունյան*


*Կարինե Աթայան*

*Արարատ Դանիելյան*

*Մասիս Մայիլյան*

*Սամվել Ավանեսյան*

*Վազգեն Միքայելյան*

*Ժիրայր Միրզոյան*

*Լեւոն Գրիգորյան*

*Նարինե Աղաբալյան*

*Սերգեյ Շահվերդյան*

*Լեւոն Մնացականյան*

*Կարեն Շահրամանյան*

*Գրիգորի Մարտիրոսյան*

***Պետական նախարար՝ Արայիկ Հարությունյան***

2006-2007թթ. եւ ապա՝ 2009-ից առ այսօր «Ազատ Հայրենիք» կուսակցության նախագահն է: ԼՂՀ նախագահի հրամանագրով 2007թ. սեպտեմբերի 14-ից նշանակվել է ԼՂՀ վարչապետ եւ վերանշանակվել 2012թ. սեպտեմբերի 14-ին:

***Առողջապահության նախարար՝ Կարինե Աթայան***

2016թ. մարտի 24-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ առողջապահության նախարար:

***Արդարադատության նախարար՝ Արարատ Դանիելյան***

2004-2007թթ.՝ ԼՂՀ փոխվարչապետ: 2007-2010թթ.՝ ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահ: ԼՂՀ նախագահի 2012թ. սեպտեմբերի 22-ի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ արդարադատության նախարար:

***Արտաքին գործերի նախարար՝ Մասիս Մայիլյան***

1993 թվականից ներգրաված է եղել ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններին մասնակցող ԼՂՀ պատվիրակության կազմում: 2001-2007 թթ.՝ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ: Ունի արտակարգ դեսպանորդի եւ լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:

***Աշխատանքի, սոցիալական հարցերի եւ վերաբնակեցման նախարար՝ Սամվել Ավանեսյան***

2006-2007թթ. զբաղեցրել է Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալի պաշտոնը:

2013թ. ապրիլի 25-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար:

***Բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարար՝ Վազգեն Միքայելյան***

2007-2011թթ.՝ Ստեփանակերտի քաղաքապետ: 2011-2012թթ.՝ ԼՂՀ վարչապետի խորհրդական: 2012-2013թթ.՝ ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի եւ բնական ռեսուրսների վարչության պետ: 2013թ. ապրիլի 19-ին ԼՂՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է վարչապետի խորհրդական:

***Գյուղատնտեսության նախարար՝ Ժիրայր Միրզոյան***

2009-2011թթ.՝ ԼՂՀ Մարտունու շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ: 2011- 2014թթ.՝ ԼՂՀ կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման վարչության տարածքային կառավարման բաժնի վարիչ: 2014 թվականից ԼՂՀ կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման եւ վերաբնակեցման վարչության պետ:

***Էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների նախարար՝ Լեւոն Գրիգորյան***

2010-2011թթ.՝ ԼՂՀ վարչապետի վերահսկողական ծառայության պետ: 2011թ. ապրիլի 1-ից՝ ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարարի տեղակալ: 2012թ. ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է կառավարության աշխատակազմի ղեկավար: 2015թ. հուլիսի 4-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով ազատվել է ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնից, նշանակվել ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար:

***Կրթության, գիտության եւ սպորտի նախարար՝ Նարինե Աղաբալյան***

2009թ. հունիսի 15-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար, վերանշանակվել 2012թ. սեպտեմբերի 22-ին:

***Մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարար՝ Սերգեյ Շահվերդյան***

ՀՅԴ անդամ է, պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել ՀՅԴ Արցախի կառույցում: 2000-2005թթ. նշանակվել է ԼՂՀ ԿԸՀ անդամ եւ ընտրվել նախագահի տեղակալ: 2005-2015թթ. ԼՂՀ ԿԸՀ-ում ներկայացրել է ՀՅԴ կուսակցությունը: 2008-ից՝ ԼՂՀ ԿԱ Զբոսաշրջության վարչության պետ: 2015 թ. ԼՂՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ԼՂՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ:

***Պաշտպանության նախարար՝ Լեւոն Մնացականյան***

2005թ. հոկտեմբերին նշանակվել է ՊԲ հրամանատարի ՄՊ գծով տեղակալ: 2007թ. մայիսին՝ ՊԲ հրամանատարի 1-ին տեղակալ-շտաբի պետ: 2012-2015թթ.՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ: 2015թ. հունիսի 15-ի ՀՀ նախագահի հրամանագրով ազատվել է ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից եւ նշանակվել ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար:

***Քաղաքաշինության նախարար՝ Կարեն Շահրամանյան***

2006-2008թթ.՝ ԼՂՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ: 2008-2010թթ.՝ ԼՂՀ ԿԱ կապիտալ շինարարության վարչության պետ: 2010թ. հուլիսի 16-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով նշանակվել է քաղաքաշինության նախարար, վերանշանակվել 2012թ. սեպտեմբերի 22-ին:

***Ֆինանսների նախարար՝ Գրիգորի Մարտիրոսյան***

2008 թվականին նշանակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ: 2015 թվականին նշանակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալ: 2010 թվականից դասավանդում է Արցախի պետական համալսարանում:

# Սոցիալիստ երիտասարդների միջազգային միության (IUSY) ներկայացուցիչները Արցախում

ՀՅԴ Բյուրոյի Երիտասարդական գրասենյակի նախաձեռնությամբ սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Սոցիալիստ երիտասարդների միջազգային միության (IUSY) անդամ միջազգային երիտասարդական-քաղաքական կազմակերպությունների երկու տասնյակից ավելի ներկայացուցիչներ ժամանել էին Արցախ: ՀՅԴ երիտասարդականը անդամակցում է Սոցինտեռնի ընկերվարական երիտասարդների միջազգային միությանը եւ կազմակերպության շրջանակներում էլ կազմակերպել էր այցելությունը:

«Այցն իրագործելու համար մի տարուց ավելի աշխատանք ենք տարել, եւ այսօր Արցախում ներկա են 18 երկրների 25 ներկայացուցիչներ: Նպատակը հակամարտությանը մոտիկից ծանոթանալն է, առարկայական պատկերացում ձեռք բերելը»,- նշել է ՀՅԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի պատասխանատու Սարգիս Մկրտչյանը եւ ընդգծել, որ Արցախ ժամանած երիտասարդները ակտիվորեն ներգրավված են քաղաքական գործունեության մեջ, եւ նրանք հետագայում դառնալու են իրենց կուսակցությունների կամ երկրների պատասխանատու ղեկավարները: Արցախ ժամանածների մեջ պատվիրակներ կային Եվրոպայից (Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա, Պոտուգալիա, Ավստրիա, Հոլանդիա, Ալբանիա, Իտալիա, Բելառուս, Բուլղարիա, Մոլդովա, Կիպրոս, Ուկրաինա), Մերձավոր Արեւելքից (Լիբանան, Իսրայել, Պաղեստին), ԱՄՆ-ից եւ Նոր Զելանդիայից:

Սեպտեմբերի 30-ին ԱՀ խորհրդարանի նիստերի մեծ դահլիճում կայացել է հանդիպում ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամների հետ: Ողջունելով երիտասարդներին՝ խմբակցության ղեկավար Արմեն Սարգսյանը խոսել է «Դաշնակցության»՝ խորհրդարանում ներկայացված սոցիալիստական խմբակցության պետականաշինության, խորհրդարանական գործունեության եւ արտաքին քաղաքականության բնագավառներում ունեցած դերի մասին: Արմեն Սարգսյանը ներկայացրել է Արցախյան հիմնահարցը՝ շեշտելով, որ ոչ թե տարածքներն են որոշում ժողովրդի ճակատագիրը, այլ ինքնորոշումից է բխում տարածքային հարցը: Արմեն Սարգսյանը եւ խմբակցության անդամ Դավիթ Իշխանյանը, պատասխանելով երիտասարդների առաջադրած հարցերին, անդրադարձել են Արցախի խորհրդարանի կառուցվածքին, կին եւ տղամարդ պատգամավորների համամասնությանը, խորհրդարանում երիտասարդների ընդգրկվածությանը, այս պահին քննարկվող օրենսդրական նախագծերին, իշխանություն եւ ընդդիմություն ներկայացնող խմբակցությունների համագործակցությանը: Ամփոփելով հանդիպումը՝ Արմեն Սարգսյանը հույս է հայտնել, որ Հայ Յեղափոխական Դաշնակցության եւ սոցիալիստական երիտասարդների միջազգային միության կապն այսուհետ ավելի կամրանա:

Նույն օրը երիտասարդ քաղաքական գործիչներին ընդունել է Արցախի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանը: Հանդիպման ընթացքում Մասիս Մայիլյանը հյուրերին է ներկայացրել Արցախի արտաքին քաղաքական առաջնահերթությունները, ինչպես նաեւ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման եւ Արցախի միջազգային ճանաչման գործընթացներում առաջընթաց արձանագրելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը: Այնուհետեւ ԱՀ ԱԳ նախարարը պատասխանել է ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Արցախի տնտեսական, քաղաքական, կրթական զարգացումներին՝ հաշվի առնելով միջազգայնորեն ճանաչված չլինելը:

Այցի շրջանակներում հանդիպում է կայացել նաեւ Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության եւ զբոսաշրջության փոխնախարար Գայանե Գրիգորյանի, Արցախում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Աշխարհի տարբեր երկրներից ժամանած երիտասարդները սեպտեմբերի 30-ին այցելել են նաեւ Halo Trust հումանիտար ականազերծման միջազգային կազմակերպության արցախյան գրասենյակ, իսկ հոկտեմբերի 1-ին՝ Ստեփանակերտի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն:

Լիբանանի Զարգացած երիտասարդություն կազմակերպության ընդհանուր համակարգող Լամա Ալ Արիդին Արցախի խնդիրը նմանեցնում է միջինարեւելյան շատ խնդիրների, որտեղ մեծ պետությունների կողմից փոքրերին իշխելու եւ իրենց ենթարկելու ընդհանուր միտումը կա: «Խնդիրը նաեւ այս շրջանի ջրային պաշարների հետ է կապված, դրա համար է Ադրբեջանը ցանկանում Արցախն իր կազմում տեսնել»,- կարծում է Լամա Ալ Արիդին, ով մինչեւ այցելությունը մտածում էր, որ վտանգավոր պատերազմական մթնոլորտ կլինի, բայց այստեղ ամեն ինչ խաղաղ տեսավ ու հանգիստ:

Կիպրոսի Էդեքս Սոցիալիստական կուսակցության արտաքին հարաբերությունների քարտուղար Գիորգոս Իրոդոտուն նշել է, որ մինչեւ Արցախ այցելելը մի քիչ կասկածամտորեն էր վերաբերում այստեղի իրավիճակին, բայց տեսնելուց հետո հասկացավ, որ ծաղկման ժամանակաշրջանում է գտնվում Արցախը եւ բավականին զարգացած է:

***Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ***

# Արցախի Հանրապետությունը չի կարող ունենալ ավելի ցածր կարգավիճակ, քան այսօր ունի

***ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում, 20.09.2017 (հապավումներով)***

Ես արդեն հինգերորդ անգամ եմ հանդես գալիս այս բարձր ամբիոնից եւ կրկին ստիպված եմ խոսել Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Կգերադասեի խոսել խաղաղության, առաջընթացի եւ համագործակցության մասին, սակայն, ցավոք, մենք այդ փուլից դեռ շատ հեռու ենք: Ուստի, պարտքս եմ համարում բացատրել, թե ինչու ենք այդքան հեռու այդ բաղձալի հանգրվանից:

Արցախի ժողովրդի ինքնորոշման պայքարի նոր փուլը մեկնարկեց գրեթե 30 տարի առաջ: Ի պատասխան Արցախի հայության ինքնորոշման անքակտելի իրավունքի իրացման խաղաղ կոչերի եւ այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի՝ Ադրբեջանը դիմեց ուժի կիրառման:

Պաշտոնական Բաքվի այդ քաղաքականության գագաթնակետն էին Ադրբեջանի հայ բնակչության ջարդերը, էթնիկ զտումներն ու զանգվածային տեղահանումները: Երբեմնի հայաբնակ ամբողջ շրջաններ հայաթափվեցին, իսկ Ադրբեջանի կառավարությունն էլ շարունակում է հետեւողականորեն ոչնչացնել իր վերահսկողության ներքո գտնվող հայկական հսկայական մշակութային եւ հոգեւոր ժառանգությունը:

Ակնհայտ է, որ այդ պայմաններում Արցախի ժողովուրդն այլ ընտրություն չուներ, քան ինքնապաշտպանության դիմելը:

1992-1994 թվականների ծանր պատերազմը, դրա հետեւանքները եւ այնուհետեւ ծավալված բանակցությունները Ադրբեջանի համար որեւէ դաս չեղան: Անցած տարվա ապրիլին Ադրբեջանի սանձազերծած քառօրյա պատերազմն ապացուցեց, որ Ադրբեջանը շարունակում է հետապնդել Արցախի ժողովրդին բնաջնջելու իր նպատակը:

2016 թվականին ծավալված ռազմական գործողությունների ընթացքում Ադրբեջանի զինված ուժերը կատարել են պատերազմի մի շարք հանցագործություններ քաղաքացիական բնակչության եւ ռազմագերիների հանդեպ: Այստեղ չեմ կարող չնշել, որ նման վայրագություն կատարած մի զինծառայող արժանացավ պետական բարձր պարգեւի: Այդ պարգեւը նրան տեսախցիկների առջեւ հանձնեց անձամբ Ադրբեջանի նախագահը:

Հարգելի՝ պարոն նախագահ,

Արդեն տարիներ շարունակ հայատյացությունը Ադրբեջանում դարձել է պետական քաղաքականության հիմնարար եւ բաղկացուցիչ մաս: Այն խորապես արմատավորվել է դպրոցական դասագրքերում եւ թունավորում է այդ երկրի երիտասարդ սերնդի մտածողությունը: Արդեն տարիներ շարունակ այդ մասին ահազանգում են ռասիզմի եւ այլատյացության հարցերով զբաղվող մի շարք մասնագիտական միջկառավարական եւ ոչ կառավարական կազմակերպություններ:

Այս ամենը մեզ բերում է այն համոզման, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը կենսական նշանակություն ունի: Այս հարցում ես արտահայտում եմ ոչ միայն Հայաստանի եւ Արցախի, այլեւ ողջ աշխարհի հայության միասնական տեսակետը: Այս ուղերձը ես բերում եմ Երեւանից, որտեղ այս օրերին կայանում է Հայաստան-Սփյուռք համաժողովը:

Բոլորը պետք է գիտակցեն, որ այժմ Ադրբեջանը ժողովրդավարական ուղիով զարգացող Արցախի համար պարզապես միջնադարյան հետամնացության խորհրդանիշ է:

Ադրբեջանը չունի իրավական եւ բարոյական որեւէ հիմք Արցախի հանդեպ հավակնություն ներկայացնելու համար: Արցախը երբեք անկախ Ադրբեջանի մաս չի կազմել, ուստի արդար չեն այդ պետական շրջանակին Արցախը բռնակցելու ձգտումները:

Հարգելի՝ տիկնայք եւ պարոնայք,

Ազատ Արցախն այսօր կայացած ժողովրդավարական հասարակություն է: Մեր ընդհանուր կարգախոսը եւ հանձնառությունը՝ «Ոչ ոք չպետք է անտեսվի», պետք է դառնա Միավորված ազգերի այս ընտանիքի գործունեության անկյունաքարը: Հենց այդ պատճառով էլ, վստահ եմ, Արցախի ժողովուրդը երբեք չի մեկուսացվի կայուն զարգացման նպատակների իրականացումից:

Խորապես համոզված եմ, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության չլուծված լինելն Արցախի բնակչության իրավունքների վրա որեւէ ազդեցություն չպետք է ունենա: Խոսքս առաջին հերթին յուրաքանչյուր մարդ էակի համար անօտարելի իրավունքի մասին է: Խոսքս կյանքի իրավունքի մասին է, հանրային կյանքը կազմակերպելու իրավունքի մասին է, սեփական իշխանությունը ազատ ձեւավորելու իրավունքի մասին է, արտաքին աշխարհի հետ ազատ հաղորդակցվելու եւ բազմաթիվ այլ իրավունքների մասին է:

Հայաստանը հետեւողականորեն նպաստել եւ նպաստելու է Արցախի ժողովրդի կյանքի բարելավմանը, նրա կայուն եւ ժողովրդավարական զարգացմանը: Ոչ ոք իրավունք չունի խոչընդոտելու նշված ուղղություններով իրականացվող նախաձեռնություններին եւ ծրագրերին: Արցախի իրավական կարգավիճակը, իսկ ավելի ստույգ՝ միջազգային իրավական ճանաչման բացակայությունը, խոչընդոտ չէ այնտեղ ապրող կանանց եւ տղամարդկանց իրավունքների իրացման համար:

Մենք համոզված ենք, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումն այլընտրանք չունի: Այժմ այս բարձր ամբիոնից ես վերահաստատում եմ մեր հանձնառությունն այդ առումով:

Միեւնույն ժամանակ, բոլորը պետք է գիտակցեն, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը մարդու իրավունքների խնդիր է: Այն կարող է լուծվել միայն մարդու հիմնարար եւ անօտարելի իրավունքներից մեկի՝ ժողովրդի ազատ ինքնորոշման միջոցով:

Կարգավորման ինչ տարբերակի էլ հանգենք, միեւնույն է, Արցախի Հանրապետությունը չի կարող ունենալ ավելի ցածր կարգավիճակ եւ վայելել ավելի քիչ ազատություն, քան այսօր ունի: Ադրբեջանը պետք է ճանաչի եւ հարգի Արցախի ժողովրդի կողմից իր ապագան ազատ կամարտահայտությամբ որոշելու իրավունքը, իսկ արցախահայության անվտանգությունը պետք է երաշխավորված լինի բոլոր հնարավոր միջազգային եւ ներքին մեխանիզմներով:

Մնացած բոլոր հարցերն ածանցյալ են: Մնացած բոլոր հարցերը կգտնեն իրենց տրամաբանական եւ արդար լուծումը՝ խնդրի կարգավորմանը զուգահեռ:

## Ստեփանակերտի վերանվանման 94-ամյակ

Ստեփանակերտը որպես բնակավայր ձեւավորվել է 19-րդ դարի սկզբին՝ Վարարակն գյուղի տեղում, որը գտնվում է քաղաքի ներկայիս տարածքում: Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց եւ երկրամասը ինքնավար մարզ հռչակվելուց հետո, 1923 թվականին 26 կոմիսարների առաջնորդ, Բաքվի կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանի հիշատակը հավերժացնելու համար այս բնակավայրը վերանվանվում է Ստեփանակերտ: Ստեփանակերտը պաշտոնական քաղաքի կարգավիճակ ունի 1923 թվականից:

Ստեփանակերտի օրվա եւ քաղաքի անվանակոչման 94-րդ տարեդարձի առիթով սեպտեմբերի 23-ին ԱՀ նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, պետական նախարար Արայիկ Հարությունյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը, Երեւանից ժամանած պատվիրակությունը՝ Երեւանի քաղաքապետի տեղակալ Դավիթ Օհանյանի գլխավորությամբ, պետական բարձրաստիճան այրեր, ստեփանակերտցիներ ծաղիկներ եւ ծաղկեպսակներ են դրել Ստեփան Շահումյանի հուշարձանի պատվանդանին: 94 տարի առաջ ԼՂԻՄ նախկին մարզկենտրոնը անվանակոչվել է Ս. Շահումյանի պատվին:

«Անշուշտ, մեր ժողովուրդն արժանի է այսպիսի տոների: Դրանք նաեւ առիթ են՝ հետադարձ հայացք ձգելու մեր քաղաքի անցյալին, գնահատելու ներկան եւ մտածելու ապագայի մեր անելիքների մասին: Այսօր մեզանից յուրաքանչյուրը կարող է հպարտանալ Ստեփանակերտի հերոսական անցյալով: Մենք նաեւ պետք է գիտակցենք քաղաքի հետագա զարգացման ու բարեկարգման գործում յուրաքանչյուրիս պատասխանատվության դերը: Կոչ եմ անում բոլորիս՝ ավելի շատ սիրել մեր քաղաքը. չէ՞ որ Ստեփանակերտը ոչ միայն Արցախի մայրաքաղաքն է, այլեւ յուրաքանչյուր հայի այցեքարտը: Ամեն այցելուի մոտ արցախցու բարոյական կերպարի մասին կարծիքը ձեւավորվում է հենց Ստեփանակերտում», - ընդգծել է Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանը:

Խոսելով մայրաքաղաքի խնդիրների մասին՝ Ս.Գրիգորյանն ասել է, որ Ստեփանակերտում դեռեւս լուծելու խնդիրներ կան, առանձնապես՝ ենթակառուցվածքների հարցում:

«Ստեփանակերտում ձեռքբերումներն ակնառու են. օրեցօր քաղաքը ծաղկում

ու շենանում է: Շատ կուզենայի, որ Ստեփանակերտը նաեւ դառնար մշակութային բարձր արժեք ներկայացնող մայրաքաղաք»,- նշել է Ս. Գրիգորյանը:

Սեպտեմբերի 23-ին Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակում եւ Ստ. Շահումյանի անվան պուրակում կայացած մարզական եւ մշակութային միջոցառումները տոնական շունչ են հաղորդել քաղաքի օրվան: ԱՀ նկարիչների միությունն ի ցույց է դրել նկարիչների ստեղծագործությունները, Ստեփանակերտի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը եւ Գյուրջյան արվեստի դպրոցը կազմակերպել են իրենց սաների կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդես-վաճառքը, նկարչական խմբակի երեխաներն էլ ցուցադրել են ձեռք բերած հմտություններն այդ արվեստում:

Մարզական միջոցառումները եւս բազմատեսակ էին՝ շախմատ, ձյուդո, բռնցքամարտ, սպորտլանդիա...: Թիվ 6 հիմնական դպրոցի մարզադահլիճում կազմակերպվել է սանդա-ուշուի բաց առաջնություն, որին մասնակցել են ՀՀ-ի եւ ԱՀ-ի մարզիկները:

Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում տեղի է ունեցել «Հին ու նոր Ստեփանակերտ» խորագիրը կրող լուսանկարչական ցուցահանդեսը:

Ստեփանակերտի փոխքաղաքապետ Արմեն Հակոբյանն ասել է, որ ցուցահանդեսին ներկայացված են հին ու նոր Ստեփանակերտի լուսանկարները: «Նոր լուսանկարների միջոցով փորձել ենք ցույց տալ այս վերջին տարիների ընթացքում կատարված փոփոխությունների, նորակառույց շենքերի, ավելացող ուսումնական հաստատությունների եւ մշակութային կենտրոնների ուրվագիծը»,- ասել է Ա. Հակոբյանը եւ կարեւորել հատկապես առողջապահական համակարգի նորակառույց շենքերի քանակը:

Հին լուսանկարների մեջ ընդգրկված են դեռեւս 1960-ական թվականներից պահպանված արխիվային կադրեր:

«Հին Ստեփանակերտը պատկերող լուսանկարները վերամշակվել են մի քանի տարի առաջ, Ստեփանակերտի քաղաքապետարանի նախաձեռնությամբ»,- ավելացրել է Ա. Հակոբյանը: Ցուցահանդեսը այցելուների համար բաց է լինելու մեկ շաբաթ:

***Լուսիե ԹԵՎՈՍՅԱՆ***

## Սարգիս Մեհրաբյանի թոռնուհին Արցախում

Այս օրերին Արցախում էին հայտնի դաշնակցական, քաղաքական ու ռազմական գործիչ Սարգիս Մեհրաբյանի (ավելի հայտնի Խանասորի Վարդան անունով) հարազատները: Սարգիս Մեհրաբյանը ծնվել է 1870թ. Արցախի Ասկերանի շրջանի Ծաղկաշատ (հնում՝ Ղշլաղ) գյուղում: Իր ողջ կյանքի ընթացքում ակտիվորեն մասնակցել է հայ հասարակական, քաղաքական կյանքին, գլխավորել կարեւոր նշանակության ռազմական գործողություններ: Մահացել է 1943թ.՝ 73 տարեկան հասակում:

Խանասորի Վարդանն ուներ 3 զավակ՝ Վարդանը, Ռուբենը եւ Մարգարիտան: «Տիֆ հիվանդությամբ վարակվելու պատճառով Սարգիս Մեհրաբյանի կինը՝ ազգությամբ ավստրիացի Ֆրանցեսկան, վաղ է հեռացել կյանքից: Խանասորի Վարդանն այլեւս չի ամուսնացել եւ միայնակ է դաստիարակել զավակներին»,- պատմում է Իրինան, ով Մարգարիտայի դուստրն է: Նրա բոլոր զավակներն էլ վառ անհատականություններ էին: Ավագ որդին՝ Վարդանը, մասնագիտությամբ ինժեներ էր: Միջնեկ որդին՝ Ռուբենը, ապրել է Մոսկվայում եւ բնական մահով

մահացել պատկառելի տարիքում, ոչ թե Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, ինչպես սխալմամբ նշված է Վիքիդեպիայում: Վիքիդեպիայում նշված մի տեղեկություն եւս չի համապատասխանում իրականությանը. Խանասորի Վարդանը թաղված է ոչ թե Երեւանի քաղաքային գերեզմանատանը, այլ Մոսկվայում:

Իսկ Արցախ գալու հիմնական նպատակը պապի վերանորոգված տուն-թանգարանը (գտնվում է նրա ծննդավայր Ծաղկաշատ գյուղում) տեսնելը եւ հռչակավոր պապի մասին նոր տեղեկություններ ստանալն է:

«Իմ նախաձեռնությամբ եմ սկսել ուսումնասիրել հայկական արմատներիս պատմությունը, եւ շատ տխրեցի, երբ հասկացա, որ այդ տեղեկություններն արդեն ոչ մեկից չեմ կարող իմանալ: Այդ հնարավորությունը կար, երբ դեռ կենդանի էին նախապապիս ժառանգները»,- նշում է Օլգան: Եվ այժմ, Արցախ այցելելով փորձում են լրացնել այդ բացը:

ՀՅԴ «Նիկոլ Դուման» կենտրոնում հյուրընկալված Խանասորի Վարդանի թոռնուհին ու ծոռնուհին Արցախի երիտասարդական միության անդամներին ներկայացրին անվանի հայի, ռազմաքաղաքական գործչի կյանքին ու գործունեությանը վերաբերող հետաքրքիր մանրամասներ:

***Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ***

# Էլիտար շենքի «լյուքս» պայմանները

4 ←

Ստեփանակերտի Հովհաննես Թումանյան 121 հասցեում գտնվող բազմահարկ շենքը քաղաքի շինություններից առանձնանում է ոչ միայն իր կառուցվածքով, այլեւ «խճճված» ճակատագրով եւ «լյուքս» պայմաններով:

Բարձրահարկ բնակելի շենքի մի հատվածը՝ 66 բնակարան ունեցող Թումանյան 111«ա»-ն, շահագործման է հանձնվել 2010 թվականին՝ բարերար Սեյրան Կարապետյանի միջոցներով, շենքի մյուս հատվածի՝ Թումանյան 121-ի շինարարությունը պատվիրել է Արցախի ներդրումային հիմնադրամը՝ 66 բնակարանների մի մասը հիպոթեքային վարկային ծրագրով, մյուս մասը սոցիալական ծրագրերի շրջանակում համապատասխան ընտանիքներին տրամադրելու նպատակով:

2013 թվականին կայացած վիճակահանության արդյունքում որոշ ընտանիքներ ստացել են էլիտար տների բանալիները, իսկ 23 բազմազավակ ընտանիք այլ ելք չունենալու պատճառով փոխադրվել է շահագործման չհանձնված, չգազաֆիկացված, մութ ու ցուրտ էլիտար շենք:

***Լոգանքի ժամանակացույց***

«Երկուշաբթին Սաթենիկի լողանալու օրն է, երեքշաբթին՝ Արմանի, չորեքշաբթին՝ իմ...»,- վեց երեխաների մայր Արֆենյա Խաչատրյանը ներկայացնում է տան յուրաքանչյուր անդամի լոգանքի ժամանակացույցը: Էլիտար շենքի չգազաֆիկացված լինելու պատճառով ինչպես Խաչատրյանների, այնպես էլ շենքում բնակվող մյուս 22 ընտանիքների անդամները լողանում են էլեկտրական կրակարանի վրա տաքացրած ջրով: Լողանալը ջուրը տաքանում է շուրջ մեկ ժամում՝ լվացքի համար նախատեսված ջրի տաքացման ու ճաշ պատրաստելու արանքում:

Իր սիրունությամբ տարբերվող էլիտար շենքը գազաֆիկացնելու են միայն շենքի շահագործման հանձնելուց հետո, քանի որ՝ ոչ լրիվությամբ բնակեցված շենքում գազաֆիկացում անցկացնելը վտանգավոր է:

***Բնակարաններ առանց կահույքի***

Եթե Արցախում նախկինում բազմազավակ ընտանիքներին տրամադրվող բնակարանները կահավորված էին, ապա Թումանյան 121-ի բազմազավակ ընտանիքների բնակարանները բացառություն են: Գրեթե բոլոր տների մի անկյունում խնամքով շարված են մինչեւ առաստաղը հասնող ներքնակները: Երեկոյան այդ «մահճակալները» կողք-կողքի դասավորվում են գետնին:

«Ամուսինս երկու մահճակալ է կարողացել բերել, հիմա երեխաները հերթով փոխում են իրենց քնելու տեղը, այդպես շաբաթը երկու անգամ ամեն մեկս քնում ենք մահճակալի վրա»,- պատմում է Նարինե Շահնազարյանը:

***Մարզանք՝ վտանգավոր աստիճանների երկայնքով***

Շինարարական մեկ կազմակերպությունից մյուսին փոխանցված 10 հարկանի՝ Հ. Թումանյան 121 շենքում մինչ օրս վերելակ չի գործում: Ինչպես ասում են բազմազավակ ընտանիքների բնակիչները՝ ամենօրյա մարզանքը իրենց կյանքի անբաժան մասն է դարձել, այն էլ՝ ոչ անվտանգ. շենքի աստիճաններին բացակայում է ճաղաշարքը:

«Ամեն օր ստիպված ենք հիշեցնել երեխաներին, որ աստիճաններով իջնել-բարձրանալուց պատի կողմում լինեն»,- ասում է 10-րդ հարկում բնակվող Լաուրա Սարգսյանը:

Պատուհանը միշտ բաց, առաջին հարկում ապրողները միշտ սիրով են ջրով հյուրասիրում վերեւի հարկերից անբարեկարգ բակ խաղալու իջած երեխաներին:

***Թագավորող խավար***

Թումանյան 121 շենքի բնակիչները 19:00-ից հետո ժամանած հյուրերին որպես կանոն դիմավորում են բակում՝ լուսարձակը ձեռներին: 10 հարկ ունեցող շենքի միջանցքները լուսավորված չեն: Այդպես շենքի մեծ ու փոքր բնակիչներն ունեն իրենց լուսավորող սարքը, որը միշտ իրենց մոտ է:

***Զբոսանք այլ բակերում***

Առաջին հարկում բնակվող Ալյոնա Դադամյանը շենքի երեխաների զբոսավարն է: 8 ամսական Սեպուհին զբոսանքի տանելուց անպայմանորեն իր հետ է տանում նաեւ շենքի մյուս երեխաներին:

«Շենքում ապրող երեխաների ծնողներն առավոտից իրիկուն աշխատանքի են լինում, այդ պատճառով բոլորին հավաքում ու տանում եմ հարեւան շենքերի բակ, որոնք բարեկարգված են եւ ունեն խաղահրապարակներ»,- պատմում է Ալյոնա Դադամյանը:

***Նախագահին ուղղված նամակը***

Հունիսին Հ.Թումանյան 121 շենքի բնակիչները նամակով դիմել են Հանրապետության նախագահին՝ խնդրելով անձամբ այցելել եւ սեփական աչքերով տեսնել կիսատ-ծվատ շինարարությունը եւ համապատասխան հանձնարարականներ տալ՝ գազաֆիկացնել շենքը, աշխատեցնել վերելակը, կարգի բերել միջանցքները եւ բարեկարգել շենքի բակը:

Քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանի խոսքով՝ այժմ կառավարությունը վերահսկում է Հ. Թումանյան 121 շենքի կառուցման աշխատանքների ընթացքը, սակայն շենքի բնակիչները էական փոփոխություններ չեն տեսնում:

«Մենք հասկանում ենք, որ շենքը դեռեւս կառուցման փուլում է, սակայն կուզեինք ապրել ժամանակակից պայմաններով բնակարաններում,- ասում է Լաուրա Սարգսյանը եւ նշում, որ հույս ունեն՝ շուտով կստանան իրենց նամակի պատասխանը:

***Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ***

# Կիսակառույց տների շինարարության ֆինանսավորման ծրագրից օգտվել է 113 ընտանիք

2015 թվականի հունիսից գործող՝ կիսակառույց տների շինարարությունն ավարտելու համար պետական ֆինանսական աջակցության ծրագրից օգտվել է 113 երիտասարդ ընտանիք:

Ծրագրի շրջանակներում՝ քաղաքներում, բացառությամբ՝ Ստեփանակերտը եւ Շուշին, եւ գյուղերում մշտապես բնակվող 18-40 տարեկան երիտասարդ ընտանիքներին անհատույց տրամադրվում է 3 միլիոն դրամ:

«Ծրագրը նպատակ ունի բարելավելու երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանները, - «Ապառաժ»-ին տված հարցազրույցում նշել է Արցախի սոցիալական ծրագրերի հիմնադրամի տնօրեն Մարատ Հասրաթյանը եւ անդրադարձել ծրագրից օգտվելու մյուս պայմաններին, ըստ որի՝ 3 միլիոն ֆինանսական աջակցության ծրագրից կարող են օգտվել այն երիտասարդ ընտանիքները, որոնք վերջին 5 տարիներին փաստացի բնակվել են տվյալ գյուղական կամ քաղաքային բնակավայրում եւ սեփականության իրավունքով ունեն կիսակառույց բնակելի շինություն, որի շինարարական աշխատանքները ոչ պակաս են, քան 50 տոկոսը:

35-ամյա Արայիկ Ավշարյանը Մարտունու շրջանի Շեխեր համայնքի բնակիչ է: 10 հոգանոց ընտանիքը տարիներ շարունակ ապրում էր Արցախյան պատերազմի ժամանակ ռմբակոծված տանը: Այսօր պապական փոքրիկ տնակի դիմաց Արայիկը կառուցում է երկհարկանի՝ 180 քառակուսի մետր մակերես ունեցող տուն:

«Տան 50 տոկոս շինարարությունն անելու համար ծախսել եմ 7 միլիոն դրամ: 2016-ին պետական ծրագրով ստացած 3 միլիոն դրամով կառուցել եմ սանհանգույցը, տեղադրել պատուհանները, հարդարել հատակը, պատերը, տունը գազաֆիկացրել ու տեղադրել ջրի համակարգ,- ասել է Ա. Ավշարյանը եւ ընգծել,- տան շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է եւս 10 միլիոն դրամ»:

Ինչպես Արայիկը, այնպես էլ մյուս մի քանի դիմորդներ ունեն միայն մեկ դժգոհություն. ծրագրից օգտվելու դիմում ներկայացնելուց ծախսել են շուրջ 600 000 դրամ՝ տան նախագծի եւ իրավաբանական մյուս փաստաթղթերի համար: Անդրադառնալով այս նկատառումին, Մարատ Հասրաթյանը նշել է, որ օրենքով նախքան շինարարությունը սկսելը քաղաքացին պետք է ունենա շինարարարության թույլտվությունը եւ տան նախագիծը:

«Գյուղերում այդ օրենքը մեծամասամբ անտեսվում է, այդ պատճառով գյուղացիներին ընդառաջելու համար հոգաբարձուների խորհուրդը որոշել է քաղաքաշինական եւ իրավաբանական բոլոր փաստաթղթերի պատրաստման ծախսը եւս վճարել: Շատ դեպքերում այս որոշման մասին անտեղյակ լինելով են դիմորդները ծախսում մեծ գումարներ,- ասել է Մ. Հասրաթյանը եւ ավելացրել, որ հիմնադրամի հետ պայմանագիր կնքած նախագծող կազմակերպությունները գործում են Ստեփանակերտում, Հադրութում եւ Մարտակերտում: Մարտունու շրջանում եւս նախատեսվում է նախագծող կազմակերպություն ունենալ, որպեսզի տվյալ շրջանների դիմորդները ստիպված չլինեն հասնել մայրաքաղաք:

Հադրութի շրջանի Տող համայնքի բնակիչ Արշակ Գրիգորյանը եւս ծրագրից օգտվելու հայտ է ներկայացրել: Երկհարկանի շուրջ 120 քառակուսի մետր մակերես ունեցող տան շինարարական աշխատանքներն այս պահի դրությամբ կանգնեցված են:

«Տունը մեծ եմ կառուցում, քանի որ դեռեւս երկու որդի ունեմ իսկ ես կողմնակից եմ մեծ ընտանիքի: Երկու տարվա ընթացքում ներդրել եմ 16 միլիոն դրամ: 3 միլիոն դրամով կկարողանամ ավարտել առաջին հարկի աշխատանքները եւ տեղափոխվել նոր տուն»,- ասել է Արշակ Գրիգորյանը, ով զբաղվում է գյուղատնտեսությամբ:

Մարատ Հասրաթյանի կարծիքով՝ 3 միլիոնը միանշանակ քիչ գումար է, սակայն կիսակառույց տունը կարելի է բնակելի դարձնել:

«Ծրագիրը նպատակային է, այդ պատճառով ղեկավարությունը քննարկումներ է ծավալում՝ 3 միլիոնը 5-ի հասցնելու ուղությամբ,- նշել է հիմնադրամի տնօրենը,- Հիմնադրամը պարբերաբար վերահսկողություն է իրականացնում, եւ խախտումներ գրեթե չենք արձանագրել»:

Նշենք, որ 2017-ին ծրագրից օգտվել է 30 երիտասարդ ընտանիք: Հիմնադրամն ունի ընդունված եւս 64 հայտ:

***«ԱՊԱՌԱԺ»***

# Ժողովրդական մարդը

*Հեռակա զրույց լիբանանահայ նշանավոր մանկավարժ, երաժիշտ-խմբավար, մշակութային եւ հանրային գործիչ Գեւորգ Գանտահարյանի հետ՝ նրա վախճանի 11-րդ տարելիցի առիթով*

*Զրույցը կազմված է «Գեորգ Գանտահարեան՝ ամէնուն ուսուցիչը» գրքում զետեղված նյութերի հիման վրա (Երեւան, 2011):*

**- Ընկեր Գանտահարյան, հայտնի է, որ Ձեր շրջապատում բոլորը՝ Ձեր սաները, գործընկերները, անգամ՝ կաթողիկոսները սովորաբար, որպես հարգանքի եւ մեծարանքի արտահայտություն, Ձեզ պարոն էին ասում: Ոչի՞նչ, եթե ես նույնպես այդ ավանդույթին դիմեմ:**

- Այո, այդպես էր: Խնդրեմ, ինչպես կհաճիք:

**- Շնորհակալություն: Եվ այսպես, պարոն Գանտահարյան, ասում են՝ մարդու կյանքը ոչ թե ապրած տարիներով պետք է չափել, այլ կատարած գործերով: Ցավոք, Ձեր երկրային կյանքը երկար չտեւեց. ծնվել եք 1925թ., Դամասկոսում, երկրային կյանքին հրաժեշտ տվել 2006-ին, Բեյրութում: Ո՞րն է Ձեր ապրած 81 տարվա գլխավոր չափորոշիչը**:

- Վստահաբար՝ աշխատանքը: Առանց քրտինքի, առանց տքնութեան կարելի չէ նուաճում կատարել: Աշխատանքը ո՛չ միայն մեր ինքութեան արտաբերումն է գործին ընթացքին, այլ ազնուական մակարդակի կը հասցնէ մարդ արարածը: Ծուլութիւնը մայր է ամենայն չարութեանց: Մեռելնե՛րը միայն չեն աշխատիր, հետեւաբար եթե մենք չենք ուզիր ողջ մեռելներու վերածուիլ, էովին պիտի հրաժարինք ծուլութենէ: Այլ խոսքով՝ հողին տակ անշարժ ողջեր կան հերոս նահատակ անունով, հողի մակերեսին շարժող երկոտանի մեռեալներ: Աշխատանքը կյանքի գրաւականն է, իսկ ծուլութիւնը՝ մահուան:

**- Ձեր կյանքի փորձից ելնելով, ասացեք, խնդրեմ, թեկուզ ընդհանուր գծերով՝ ո՞րն է մարդկային կյանքի խորհուրդը:**

- Խորհուրդ մըն է մարդկային կյանքը. ցաւով լոյս աշխարհ կը մտնենք եւ ցաւով մահվան խավարին մէջ կը թաղուինք: Ինչ որ սակայն ցաւագոյնն է, ծնունդէն մահ թաւալող տարիներու ընթացքին մէջ ապրած կեանքն է: Որովհետեւ երեք պարագային ալ մեր ազատ կամքը բացակայ է: Կարճ՝ մեր կամքով չենք ծնիր, մեր կամքով չենք մեռնիր, բայց մանավանդ մեր կամքով չենք ապրիր, որովհետեւ արտաքին պայմաններու, պահանջքներու բեռան տակ կը հարմարինք շրջապատին ու կփորձենք վարել մեր կեանքը ըստ անոնց: Քիչերուն, շատ քիչերուն, ընտրեալներուն միայն տրուած կը ցլայ շնորհքը պայքարելու այս դժբախտ կացութեան դէմ, ըլլալու ինքնզինքին հաւատարիմ, պահելու մարդու հարազատ պատկերը եւ այդ պատկերով ներկայանալու շրջապատին: Այդպիսիներ կունենան իրենց ներքին ճշմարտութիւնը, որուն շողերով կը փորձեն լուսաւորել մարդոց հոգիները եւ երջանկացնել մարդկային ընկերութիւնը:

**- Դուք ծնվել, մեծացել եք Հայոց ցեղասպանությունից մազապուրծ այնթապցի գաղթականների վերընձյուղված օջախում եւ ողջ գիտակցական կյանքում, Ձեր ժամանակակիցների վկայությամբ, մշտապես հավատարիմ եք մնացել Ձեր ծնողներից ժառանգած հայ կոչվելու իրավունքին: Ձեր կարծիքով, ծնունդով հայ լինելը միայն գենետի՞կ իրողություն է, թե՞ կոչում, որ պարտավորեցնում է ընդմիշտ լինել եւ ապրել այդպիսին:**

- Հայ կոչուիլը, հայու զաւակ ըլլալը եւ հայօրեն ապրիլը տարբեր հասկացութիւններ են: Որքան եան մականունը կրող հայեր կան, որոնք սակայն երբեք մաս չեն կազմեր հայութեան: Անունով միայն հայեր են: Հայօրէն ապրելու համար հայ ազգին պատկանած ըլլալու խորունկ գիտակցութեան եւ հպարտութեան տէր պէտք է ըլլայ մէկը: Ինչպէս որ անձը անհատականութեան վերածուելու համար իր ինքնութեան զատորոշիչ ստորոգելիներու տէր պէտք է ըլլայ, այնպէս ալ ազգ մը իր առանձնայատկութիւններով անկախ իր տեղը պէտք է ունենայ ազգերու ընտանիքին մէջ: Ծաղկաստանի մէջ ծաղիկ մը իր առանձին բոյրով ու գոյնով: Արդ ինչպէ՞ս կարելի է ապրիլ հայօրեն: Կը պատասխանեմ անմիջապես. հաւատարիմ մնալով հայոց պատմութեան յավերժական երթ ապահովող հիմնական արժէքներուն:

**- Պարոն Գանտահարյան, Ձեր գերդաստանը մեկն է Հայոց մեծ եղեռնը վերապրած եւ աշխարհի չորս ծայրերը սփռված, այսպիսով իսկ՝ հայրենազուրկ դարձած բազում հայ ընտանիքներից: Մեծ թվով հայեր, ինչպես որ Ձեր նախնիք, ապաստան են գտել հյուրընկալ արաբական երկրներում: Բայց որքան էլ ապահով լինի այդ ապաստանը, այնուամենայնիվ, Դուք եւ Ձեր ժառանգները, փաստորեն, զրկված եք նախնյաց հողում՝ Արեւմտյան Հայաստանում, կոնկրետ Դուք ու Ձեր զավակները՝ Այնթապում ապրելու բնականոն իրավունքից ու կարելիությունից: Եվ այդպես՝ սերնդե սերունդ: Հայրենի հողի Ձեր բնորոշումը, խնդրում եմ:**

- Հայրենիքը հողի տարածք չէ միայն, լեռ ու ձոր, դաշտ ու գետ: Այդ հողատարածքը նուիրականացած է մեր պապերուն քրտինքով ու արիւնով: Հողին խառնուած ամէն մի աճիւն, նիւութեղէն այդ բնութիւնը հոգեղէն իսկութեան վերածած է, ու մենք հայրենիք հասկացութեամբ հողին ներքեւ հանգչող մեր բոլոր հերոսներէն, սուրբերէն, նահատակներէն, ստեղծագործ հանճարներէն ճառագայթող լոյսով ողողած ենք մեր հոգիները, ու ամեն անգամ որ վտանգ հասնի հողային տարածքին, մենք՝ ողջերս, մեր մեռելները պաշտպանելու համար պատրաստ կը դառնանք մեր կեանքը վճարելու: Հայրենիքը աշխարհագրական տարածք մը չէ: Անիկա դարերով յիշատակներ ծրարած, արիւն-քրտինք ամբարած, ստեղծագործ հանճարի հոյակերտումներով գեղեցկացած, հոգեղինացած, նուիրականացած, սրբագործուած խորհուրդ խորին է, որուն համար բոլոր սերունդները վճարած են իրենց էն թանկագինը՝ Աւարայրէն մինչեւ Սարդարապատ, Ղարաքիլիսէ, Բաշ-Ապարան:

**- Ավարտելով Անթիլիասի դպրեվանքը, որը բոլոր Հայրապետների կողմից կոչված է Կաթողիկոսության սիրտ, Ձեր հետագա ողջ կյանքը կապել եք հոգեւոր եւ աշխարհիկ գործիչների պատրաստման այդ վաստակաշատ կրթօջախի հետ: Թույլ տվեք հիշեցնել Արամ Ա Վեհափառի բարձր գնահատանքը, որ նա տվել է 2010թ. Ձեր 80-ամյա հոբելյանի առիթով. «Դպրեվանքի 75 տարիներու կեանքին ու առաքելութեան մեջ դուք 50 տարիներ եղաք մնայուն ու նուիրեալ ներկայություն»: Համաժամանակ, որպես հայտնի հասարակական գործիչ, հանրային-մշակութային կյանքի խոշորագույն դեմքերից մեկը, մշտապես մաս եք կազմել Մեծի Տանն Կիլիկիո Ս. Աթոռի Լիբանանի թեմի Քաղաքական ժողովին, Ուսումնական խորհրդին, Ազգային ընդհանուր ժողովին: Դարձյալ՝ Վեհափառի բնորոշմամբ ասած՝ որպես «Կաթողիկոսարանէն ներս եղած անվեղար միաբան», անմնացորդ նվիրումով մասնակցել եք կաթողիկոսության բոլոր ձեռնարկումներին: Ձեր գնահատմամբ՝ ի՞նչ խորհուրդ է պարունակում հայ-քրիստոնյա ավելի քան 1700-ամյա զուգակցությունը:**

- Հայաստանեայց եկեղեցին ամէնէն ամուր կռվաններէն մէկն է մեր ազգի հավերժության: Հայ-քրիստոնեայ զուգակցությունը, իբրեւ ներդաշնակ բաղադրութիւն հայ գոյութեան՝ հաստատ համոզում է մեր ժողովրդին մեջ: Այնքան սերտօրէն առնչուած, ընդելուզուած կտեսնենք ազգ-եկեղեցի հասկացութիւնները, հայ եկեղեցին Աստծոյ տունը ըլլալու կողքին, է՝ նաեւ ազգին տունը: Հայ եկեղեցւոյ քրիստոնէութեան յավիտենական ճշմարտություններու հայացած օրրան է հայ եկեղեցին: Դարերու ընթացքին նորակերպ զարդարեալ, բարոյական առաքինութիւններու շտեմարան: Քաղաքական իշխանութեանց բացակայութեան ժողովուրդին տիրութիւն ըրած հեղինակութիւն: Հայաստանեայց եկեղեցին այնքան սերտօրեն առնչուած է հայ ժորովուրդի պատմութեան, որ երկոքեան եղած մի մարմին: Ահա թե ինչո՞ւ, անկախ զուտ կրօնական բնոյթէն, եւ է՝ նոյնքան ազգային բնոյթով հաստատութիւն, որուն մէն մի քարը գաղտնի ճամբայ մը ունի, որ կը տանի ո՛չ միայն Աստուծոյ արքայութեան, այլ նաեւ հայոց հայրենիքին:

Ինչ վերաբերում է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Դպրեվանքին, ապա կրկնում եմ, ինչ ասել եմ Դպրեվանքի հիմնադրման 75-ամյակի առիթով՝ Թեհրանի եւ Թավրիզի մէջ, 2005-ին կազմակերպուած հանդիսութեանց ընթացքին. Անթլիասի Դպրեվանքը պիտի դառնար դարբնոցը Մարդու եւ Հայու կազմաւորման, այլ բացատրութեամբ՝ նուիրական օճախ մարդակերտումի եւ հայակերտումի: Երեք քառորդ դարու ընթացքին Դպրեվանքը հայ ազգին նվիրած է 4 կաթողիկոս՝ Զարեհ Ա., Խորեն Ա., Գարեգին Բ. եւ Արամ Ա., ում օրոք ինձ բախտ է վիճակվել ծառայել հայ եկեղեցուն եւ հայ դպրությանը, ապա՝ 35 եպիսկոպոս, 80 կուսակրօն քահանայ, շուրջ 200 ամուսնացեալ քահանայ եւ 300 աշխարհական ուսուցիչներ, դպրապետներ, մտավորականներ, հասարակական գործիչներ, նուիրեալ ծառաներ հայ մշակոյթի եւ կրթութեան: Սխալած կըլլա՞նք արդեօք, կատարելով հետեւեալ հաստատումը. «Առանց Դպրեվանքի ներդրումին, մեր ազգային կեանքը կարեւոր չափով պիտի աղքատանար»:

**- Ձեր ողջ գիտակցական կյանքում եղել եք Հայ Յեղափոխական Դաշնակցության նվիրյալ անդամներից մեկը՝ անձնուրաց մաս կազմելով կուսակցության ազգապահպան եւ հայրենաշեն գործունեությանը: Այսօր էլ սերունդների հիշողության մեջ Դուք մնում եք այդպիսին՝ որպես անմոռաց կուսակցական գործիչ: Ի՞նչ կմաղթեիք ՀՅԴ մերօրյա նորագիրներին:**

- Դաշնակցակա՞ն կուզենք ձեւանալ, թէ՞ դաշնակցական կուզենք ըլլալ: Դաշնակցութեան անդամ ըլլալը կայական բնոյթ չունի, այլ լինելային: Այս իմաստով ով որ անդամ ըլլալէ ետք գոհանայ յայտարարելով, թե դաշնակցական է, չարաչար կը սխալի եւ կես ճամբէն կը նահանջէ ուխտադրուժ դառնալով: Ամէն օր դաշնակցական տիպարը իրագործելու ձգտումը պէտք է ընկերը մղէ մտածելու, գործելու, որպէսզի նման բարոյական տիպարներու կազմակերպութեան վերածուի Դաշնակցութիւնը եւ այդ զոհաբերութեան պատրաստ ասպետական փաղանգով ապահովուի անհատ մարդու քաղաքացիական ազատութիւնը եւ հայ ժողովուրդի անկախ պետականութեամբ ինքնզինք իրագործելու, արժանի տեղ գրաւելով մարդկային ընտանիքին մեջ:

**- 1915թ. ապրիլի 24-ին Օսմանյան Թուրքիայում սկիզբ առած Հայոց ցեղասպանությունը, որպես ազգային մեծագույն ողբերգություն, ահա արդեն մեկ դարուց ավելի է, ինչ սերնդե-սերունդ անդարմանելի վիշտ ու ցավ է դարձած մեր ժողովրդի համար: Չնայած համայն հայության հետեւողական ջանքերին, միջազգային հանրությունը տակավին դժվարանում է միաձայն ճանաչել ու դատապարտել մարդկության դեմ ուղղված այդ զանգվածային եղեռնագործությունը: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւմ է կայանում Հայ դատի խորհուրդը, առաջին հերթին՝ մեր ժողովրդի համար:**

- Ապրիլյան մեր մէկուկէս միլիոն նահատակները, ճիշդ է, որ մեր հոգիները կը լցնեն խորունկ թախիծով եւ սուգով, բայց զգացական դիմաւորում մը՝ լացով ու սուգով, յիշատակի հանդիսութիւններով, ոչինչ չի կնայ փոխել մեր ազգային իրավիճակէն, եթէ մենք ահաւոր այդ Եղեռնը չդիմագրաւենք քաղաքական մտածողությամբ: Սերունդներու պարտականութիւնն է յիշել իրենց մեռելները՝ շարունակելու համար յավերժական երթը իրենց ցեղին եւ չկոտրելու համար թելը՝ անցեալին ու ներկային: Բայց հոն կանգ առնելը անբաւարար է, եթէ սերունդները կատարուած ցեղասպանութիւնը համայն աշխարհին յիշեցնելու պարտքին յանձնառու դերակատարներ չըլլան: Չարիքը մոռնալը նախատինք է հայութեան, բայց զայն ուրիշներուն չյիշեցնելը՝ աւելի մեծ ամօթ: ...Հետեւաբար, ազգային գիտակցութիւնը, քաղաքականութիւնը, հասուն մտածողութիւնը հրամայական անհրաժեշտութեան առջեւ կը դնեն հայութիւնը՝ մէկտեղելու իր բոլոր կարելիութիւններն ու ուժերը՝ ի սպաս Հայ դատին: Ով որ կը գիտակցի պատմական այդ ճշմարտութեան, ով որ անկեղծ տագնապ կապրի՝ հայուն դառն ճատագրին, ով որ կուզէ իրագործուած տեսնել մեր հողային պահանջները, եւ ով որ կուզե երախտագէտ զգացումով յարգել յիշատակը մէկուկէս միլիոն նահատակներուն, պարտաւոր է հայու աչքերով նայիլ, հայու պես, մաքուր եւ սրտացաւ, երբ հայը այդպէս նայած է այլ ազգերու զավակներու աչքին: Ուժեղանալ իրարմով, այս է կտակը ապրիլեան մեր նահատակներուն:

**- Դուք մշտապես մտասեւեռ կհետեւեիք Արցախում տեղի ունեցող ազգային-ազատագրական պայքարի եւ արցախահայության դեմ հարեւան Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքին: Թեկուզ տակավին միջազգայնորեն չճանաչված, բայց արդեն քառորդ դարից ավելի է, ինչ Արցախը հաղթականորեն կերտում, ամրապնդում, կատարելագործում է իր անկախ, ինքնիշխան պետականությունը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ խորհուրդ ունի Արցախի պայքարը յուրաքանչյուր հայի համար:**

- Աստուած բախտ վիճակեց ինծի ըլլալու ազատագրուած Արցախ: Հրաշալի ապրումներ էին Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ մէջ լիբանանահայ մօտիկ բարեկամներու հետ մեր աղօթքի, խոկումի պահերը: Այնտեղ խոր զգացողութիւն եւ համոզում ունեցանք, որ մեկնարկած է մեր ժողովուրդի զարգացման, յարատեւման եւ մեր դարաւոր երազներու իրականացման ճանապարհի կարեւորագոյն եւ անկիւնադարձային հանգրուանը:

Արցախը Միացեալ Հայաստանի վերականգնման կարեւորագույն հանգրուանն է: Արցախը նաեւ մեր ժողովուրդի հոգեշարժն է, մեր գիտակցական զարթօնքի ամենահզօր կռուանը, որուն հանդէպ պէտք է գուրգուրալ եւ ընել հնարաւոր ամէն ինչ զայն պահպանելու, անվտանգ ու խաղաղ պահպանելու: Արցախէն կը սկսի մեր վաղուան հզօր ու ամբողջական հայրենիքի վերակերտումը: Ուստի, ամեն հայու պարտքն է ազատագրել Ղարաբաղը, որուն հողը ոռոգուած է մեր հայրերու մաքուր արիւնով, այնքան առատ, որքան Կասպից ծովու քարիւղը:

→ 7

# Հրատարակվել է պատմական կարեւոր նշանակություն ունեցող մատյան

Սեպտեմբերի 8-ին Մատենադարանի նիստերի դահլիճում կայացել էր Ստեփանոս Երեց Հազարջրիբեցու «Հանգիտագիրք» մատյանի շնորհանդեսը: Գիրքը հրատարակվել է Թեհրանի «Ալիք» տպարանում, Փերիո Կրթասիրաց միության վարչության նախաձեռնությամբ: Միությունը հիմնադրվել է 1928թ. Նոր Ջուղայում: Գյուղերում կրթական կյանքը զարգացնելու համար դպրոցներ են բացում, ուսուցիչներ են մատակարարում, հովանավորներ գտնում, նյութական ծախսերը հոգում եւ այլն: Միության աշխատանքները 1960-ական թթ. դադարում են եւ նորից վերսկսվում 1991թ. սեպտեմբերի 20-ին Թեհրանում:

Միության վարչության անդամ եւ գրքի հրատարակության պատասխանատու Գասպար Ամիրխանյանը, ով նաեւ 2 շրջան գլխավորել է Փերիո կրթասիրաց միությունը, «Ապառաժ»-ի հետ զրույցում նշել է, որ ամեն ինչ սկսվեց 2014 թ. օգոստոսին, երբ Հայաստանում կազմակերպվեց «Փերիայի օրերը Հայաստանում» եռօրյա ծրագիրը: «Ծրագրի նախօրյակին նյութեր էի փնտրում ներկայացնելու համար: Նոր Ջուղայի պատմության մեջ հանդիպեցի Ստեփանոս Երեցի անվանը: Նոր Ջուղայի պատմագիր Հարություն Հովնանյանցը նշում էր, որ Նոր Ջուղայի պատմությունը գրելու համար նյութեր չէր գտնում եւ փոշեթաթախ ձեռագրերի մեջ գտավ մի փոքրիկ գրքույկ՝ Ստեփանոս Երեցի ձեռագիր մատյանը, որն ավելի մղեց նրան գրելու այդ պատմությունը»,- պատմում է Գասպար Ամիրխանյանը եւ ավելացնում, որ այդ խայծը պատճառ դարձավ, որպեսզի «ընկնի» Ստեփանոս Երեցի անվան հետեւից: «Բարեբախտաբար 3 հոդված գտա իր մասին՝ Հակոբ Իրազեկի հոդվածը, Արամ Երեմյան ազգագրագետի հոդվածը եւ իրանահայ բանասեր Լեւոն Մինասյանի հոդվածը, որոնք բոլորն էլ բարձր էին գնահատում այդ ձեռագիրը»,- ասել է մատյանի տպագրության պատասխանատուն: Խորհրդակցելով ՀՀ Սփյուռքի նախարարի, Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ առաջին դեսպան, պգդ Վահան Բայբուրդյանի հետ, Փերիո միության վարչությունը որոշել է տպագրել այդ ձեռագիրը:

«Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատողները գրաբարը աշխարհաբարի վերածեցին, եւ հուլիսին տպագրական գործը Թեհրանի «Ալիք» տպարանում ավարտեցինք»,- նշել է Գասպար Ամիրխանյանը: Հուլիսի 19-ին Թեհրանում կատարվեց գրքի շնորհանդեսը, իսկ սեպտեմբերի 8-ին՝ Երեւանի Մատենադարանում: Այսօր արդեն գրքի 400 օրինակ սպառվել է:

«Քանի որ մատյանը պարունակում է Իրանի պատմության վերաբերյալ որոշ դրույթներ, որոնց այլ պատմաբաններ չեն անդրադարձել, եւ դրանով ավելի արժեքավոր է, ծրագրել ու արդեն ընթացքի մեջ ենք դրել գրքի պարսկերեն թարգմանությունը, որը, հույս ունեմ, մինչեւ 6 ամիս կտպագրենք եւ Իրանի պատմաբաններին կներկայացնենք մոռացված Ստեփանոս Երեցի մատյանը»,- նշել է Գասպար Ամիրխանյանը եւ հավելել, որ պահանջարկից ելնելով՝ նախատեսվում է եւս 200 օրինակ վերահրատարակել եւ ուղարկել Հայաստան, նաեւ հեռահար նպատակ ունեն՝ մատյանը թարգմանել անգլերեն:

Կատարած աշխատանքների համար Փերիո կրթասիրաց միությունն արժանացել է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից ոսկե մեդալին:

Ստեփանոս Երեցը ծնվել է 1746թ. Իրանի Սպահանի շրջանի Փերիա գավառի Հազարջրիբ գյուղում, սերում է քահանայական տոհմից: Փերիան Սպահանի մոտակայքում գտնվող մի գավառ է, որտեղ Շահ Աբբասյան բռնագաղթի բերումով քշվել է հայ գյուղացիությունը: Հայերը շուրջ 30՝ զուտ հայկական գյուղեր են հիմնադրել: Գյուղերը հետագայում մեծացել կամ փոքրացել են՝ հասնելով երբեմն 23-ի, երբեմն 26-ի: 1946թ. Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ներգաղթ է կազմակերպվում, 7 գյուղեր ամբողջությամբ ներգաղթում են Հայաստան, որոշ գյուղերից էլ որոշ չափով: Այնուհետեւ, 1960-70-ական թթ. նոր ներգաղթ է կատարվում Փերիայից Հայաստան: Բոլոր գյուղերում, բացի Բոլորան գյուղից, որը մինչ հիմա զուտ հայաբնակ է, համարյա հայեր չեն մնում: Որոշ գյուղերում պահվել են հայկական եկեղեցիները, դպրոցի շենքերը:

Ստեփանոս Երեց Հազարջրիբեցու Պատմության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1665-1789 թվականները, այսինքն՝ Իրանում Սեֆյան հարստության Շահ Աբբաս Երկրորդի կառավարման վերջից մինչեւ Մուհամմադ խանի եւ Լութֆալի խանի ժամանակները: Նվիրված լինելով 17-րդ դարի երկրորդ կեսի եւ 18-րդ դարի պատմությանը՝ գիրքն ընդգրկում է տվյալների ավելի լայն շրջանակ: Ստեփանոս Երեցի Պատմությունը կարեւորագույն տեղեկություններ է պարունակում նաեւ հարեւան երկրների՝ Աֆղանստանի, Հարավային Կովկասի երկրների, հատկապես Վրաստանի պատմության վերաբերյալ:

«Հանգիտագիրքը» մեզ է հասել երկու ձեռագրով: Բնագիրը պահվում է Նոր Ջուղայի ձեռագրատանը: Երկրորդ մատյանը պահվում է Երեւանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, որը 1945-1946 թվականներին Ջուղայի ձեռագրից ամբողջությամբ ընդօրինակել է իրանահայ բանասեր Լեւոն Մինասյանը: Բնագիրը հրատարակվում է Ջուղայի ձեռագրի հիման վրա: Այն բաղկացած է 488 էջերից: Հիմնական մասը կազմում է քառասունմեկ գլուխներից բաղկացած Պատմագիրքը, ունի առաջաբան եւ հիշատակարան, անհասկանալի բառերի բառարան: Ձեռագրում տեղ են գտել նաեւ Ստեփանոս Երեցի հեղինակած տաղերը: Բնագիրը պատրաստել եւ աշխարհաբարի են փոխադրել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատողներ Թամարա Մինասյանը եւ Լուսինե Թումանյանը: Առաջաբանը գրել է պգդ, իրանագետ Վահան Բայբուրդյանը, իսկ ծանոթագրությունները՝ Վահան Բայբուրդյանը եւ Մատենադարանի ավագ գիտաշխատող, իրանագետ Հասմիկ Կիրակոսյանը:

Գործը արժեքավոր է մանավանդ 18-19-րդ դարերի իրանահայության եւ Իրանի պատմությամբ հետաքրքրվողների համար:

***«ԱՊԱՌԱԺ»***

# Ժողովրդական մարդը

6← Ճիշդ է, քաղաքական աշխարհը այսօր մեր արեան եւ ազգրպէյճանական քարիւղը սակարկութեան է դրած. չենք գիտեր ի՞նչ լուծում կը ստանայ հարցը, բայց հայութիւնը վճռած է. իր պապերու հողէն թիզ մը իսկ չզիջիլ ու պայքարը շարունակել մինչեւ վերջին շունչ:

**- Անթիլիասի դպրեվանքում, ապա եւ զուգահեռաբար՝ Բեյրութի Հայկազյան համալսարանում եւ «Համազգայինի» Հայագիտական հիմնարկում Դուք երկար տարիներ դասավանդել եք հայ մատենագրություն, հայ հին գրականության պատմություն, գրաբար, հայ երաժշտության պատմություն եւ այլ առարկաներ: Ինչպես վկայում են Ձեր ժամանակակիցները՝ շատ հաճախ Դուք ինքներդ եք հավաքել անհրաժեշտ բոլոր նյութերը, դասընթացներ ու ձեռնարկներ շարադրել սաների եւ աշակերտների համար: Ձէ՞ք ափսոսում, որ այդ շարադրանքներն ու մշակումներն ամբողջությամբ չեն պահպանվել: Պատկերացնո՞ւմ եք՝ դրանց հազիվ մի քանի նմուշներ են, որ զետեղված են Ձեր կյանքին ու գործին նվիրված գրքում: Բացի այդ, Դուք կարող էիք հարուստ հուշերի եւ տպավորությունների հետաքրքրական գիրք գրել: Բայց, ավաղ...**

- Դժբախտաբար յուշեր չեմ գրած. չեմ պահած նաեւ ուսումնասիրութիւններ երաժշտագիտական, շարականագիտական, մատենագրական: Կը կարծեմ սակայն, որ այն, ինչ որ ունեցած եմ իբրեւ իմացականութիւն, մինչեւ վերջին գիրը, տառը, խորհուրդը փոխանցած եմ աշակերտներուս եւ ուսանողներուս: Անմնացորդ ծառայած եմ հայ գիրին, գրականութեան, երաժշտութեան: Յոյս ունիմ, որ այն, ինչ որ չեմ ըրած, աշակերտներս եւ ուսանողներս կ՛ամբողջացնեն իբրեւ յուշ, վկայութիւն, տպաւորութիւն: Ինչպէս որ կ՛ընեն արդէն...

**- Մանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ Դուք տասնյակ տարիներ զբաղվել եք նաեւ երաժշտական-խմբավարական գործունեությամբ: Հիմնադրել եք մի շարք բազմաձայն երգչախմբեր՝ «Ձվարթնոց», «Կոմիտաս», «Կանաչյան», «Շնորհալի», «Հոբելյանական»: Անգամ մի շրջանում ստանձնել եք «Բարսեղ Կանաչյան» երաժշտանոցի տնօրենի պաշտոնը: Ձեր կարծիքով՝ որպես արվեստ, որպես մշակութային բաղադրիչ՝ ի՞նչ տեղ ու դեր ունի երաժշտությունը հայ ժողովրդի կյանքում:**

- Երաժշտությունը հայ ժողովուրդի ամէնէն բարձր արուեստներէն մեկն է: Պետք է գիտնալ, որ եթէ երբեք հայ ճարտարապետութիւնը, մանրանկարչութիւնը կրնան միջազգային մակարդակի վրայ մեզի վարկ ապահովել, անցյալին արդէն Կոմիտասի ճամբով եւ Կոմիտասի գործունեութեամբ հայ երաժշտութիւնը ինքնգինք պարտադրած էր օտարներուն՝ արեւելեան երաժշտական աշխարհին մէջ իր եզակի ազնուականութեամբ, խորութեամբ, լոյսով մը նոր աշխարհ բացած էին արեւմտեան աշխարհին: Հայկական երգը հայ ժողովուրդի հոգիին ամէնէն անմիջական բխումը եւ ամէնէն հարազատ արտայայտուիւնն է: Կը հաւատամ, որ սփիւռքեան մեր պայմաններուն մէջ հայեցի ինքնութեան պահպանման համար այլ ազդակներու կողքին հիմնականներէն մէկն է հայ երգը, որ մարդկային ձայնով հրամցուած անմիջական եւ խոր թափանցում մը կունենայ հոգիներէն ներս՝ աւելի ամրացնելով զանոնք հայ արժէքներուն կառչած մնալու գիտակցութեան եւ հաւատքին մէջ: Երգը շատ աւելի խորունկ անցեալէն կու գայ, շատ աւելի հարազատ արձագանգով կը հասնի մեզի, քան խոսքը: Կոմիտասն է ըսողը՝ «Երբեմն իրա՛վ երգ մը հազար ճառ կարժէ»:

**- Պարոն Գանտահարյան, վերջին հարցս. ինչպիսի՞ն եք տեսնում հայ ժողովրդի վաղվա օրը: Արդյոք կիրականանա՝ Ազատ, Անկախ եւ Միացյալ Հայաստանի վերականգնման ու վերաշինման մեր նվիրական երազանքը: Դուք հավատո՞ւմ եք այդ երանելի ապագային:**

- Կը հաւատամ, եւ ինծի հետ կը հաւատան բոլոր հայորդիները, որ պիտի գայ այդ օրը, ուշ կամ կանուխ, երբ վերջ պիտի գտնեն սփիւռքեան մեր կայանները, եւ պիտի չմնան Այնթապցի կամ Մարաշցի, Տէոորթ-Եոլցի կամ Այնճարցի, Ատանացի կամ Ուրֆացի, այլ մենք պիտի դառնանք Երեւան ու Վան, Օձուն ու Սասուն, Թալին ու Կարին, Մուշ, Արածանի, Ախուրեան, Անի, Արագած ու Մասիս, Արաքս ու Տիգրիս, եւ ամբողջացած հայրենիքի մէջ, ամբողջացած հայութեամբ, այս ազնիւ ու պաշտամունքի արժանի ազգը դարձեալ պիտի ստեղծագործէ՝ դառնալով մեծ բարիք համայն մարդկութեան քաղաքակրթութեան: Անպայման պիտի գայ երջանիկ այդ օրը, որքան ատեն որ յոյսը չէ մարած հոգիներուն մէջ եւ պայքարելու կամքը չէ տկարացած: Այն ատեն, պանդխտութեան ցուպը մէկդի նետելով եւ օտարութեան փոշին թոթափելով, հայ ժողովուրդը պիտի վերադառնայ իր պապերուն երկիրը եւ դարձեալ իր հանճարով պիտի ստեղծէ հրաշակերտ կոթողներ, նոր Ձուարթնոցներ եւ Հռիփսիմեներ: Դարձեալ մշակներու բերնէն պիտի լսուի հայ հոգիի ջինջ ակունքէն բխող հորովելներ եւ հայորդիներու փաղանգը իր քրտինքով ու արիւնով դարձեալ պիտի շաղախէ մեր հողերը, մեր սուրբ հողերը, անոնց ընդերքներէն ունկնդրելով Արդարութեան եւ Ազատութեան անլռելի ղօղանջները:

**- Պարոն Գանտահարյան, Ձեր մաղթանք-ուղերձը հայ ժողովրդին:**

- Ուխտենք պայծառ պահել մեր եկեղեցին: Ուխտենք հզօր պահել մեր հայրենիքը: Ուխտենք ազատագրուած Ղարաբաղը իր լրումին հասցնել: Ուխտենք թշնամուն կրունկներուն տառապող մեր հայրերու աճիւններու վրայ նոր հայրենիք կերտել՝ հայութեամբ բնակուած:

**- Խորապես շնորհակալ եմ Ձեզ, պարոն Գանտահարյան, զրույցի համար: Ինձ համար անչափ հաճելի եւ, առավելապես, իմաստնալից էր այս հեռակա հանդիպումն ու հաղորդակցությունը Մեծ հայի հետ: Աստծո լույսն իջնե Ձեր հոգուն, Մայր հայրենիքում՝ Երեւանի գերեզմանատանը հանգրվանած Ձեր շիրիմին:**

- Աստուած պահապան Ձեզ եւ Աստծոյ զօրակցությունը մեր ողջ ժողովրդին:

***Զրույցը վարեց Միքայել Հաջյանը***
***Սեպտեմբեր, 2017թ.***

# «Ապառաժ»-ը 100 տարի առաջ եւ այսօր

## Նոր պատահարի առաջ

Այս տարւայ երաշտը Ղարաբաղին մի դժբախտութիւն եւս բերաւ: Դժբախտութիւն, որ սպառնում է հիմնիվեր աւերել նրա տնտեսութիւնը:

Դա անասունների կերի փչանալն է: Բուսականութիւնը չորանալով՝ ոչ խոտ է մնացել եւ ոչ յարդ ստացւել հացահատիկներից: Տափարակներում, որտեղ անջրդի է ցանքը, թէ արտերն են չորացել եւ թէ խոտը: Իսկ լեռնային մասերում երաշտն այնքան հուպ է տւել, որ կանաչն սկսել է գետնի երեսից մի թէզ չբարձրացած հասկ հանել եւ հացահատիկ միայն տալ:

Այսպիսով, մեր անասնապահութիւնը եւ մեր ապագայ գիւղատնտեսությունը, մանաւանդ տափաստանի գիւղերում, լուրջ վտանգների առաջ են կանգնած: Այժմէն սկսել են անասունները կիսագին վաճառել կամ մորթոտել, տեսնելով, որ նրանք պիտի կոտորւեն քաղցից:

Գիւղացու ձեռից իր լծկանն ընկնելով նա պիտի մնայ առանց վարուցանի մնալով՝ առաջիկայ տարին պիտի մատնւի սովի ու քաղցի: Գիւղացին, որ վարուցանքով է միայն գիւղացի եւ անասունով կենդանի:

Եթէ նրա ձեռից նրա անասունը գնայ, միեւնոյն է, թէ նա մեռած է: Ճիշտ այնպէս, ինչպէս ձուկն առանց ջրի:

Այս տխուր հեռանկարի առաջ մենք բնաւ չենք տեսնում, որ մի հասարակութիւն, մի կոլեկտիւ, մի կոոպերատիւ եւ այլն խոսք բաց անէ անասունների գլխին կանգնած սարսափների մասին: Հէնց ամենքս մի բերան կոչում ենք հաց, պարենաւորում, շաքար - մեր ստամոքսի համար: Անլեզու անասունները շատ քիչ են մեր միտը գալիս եւ կարծես ոչ ոք չի մտածում, թէ անասունը չէ միայն, որ պիտի կոտորւի քաղցից, այլ եւ մարդիկ, գիւղական հասարակութիւնները, որոնք անասուններով են կենդանի՝ նոյն վիճակին պիտի ենթարկւեն:

Եւ այսօր, որքան բնութեան այս պատուհասը լայնանում է, այնքան մարդիկ լուռ անտարբերութեամբ կամ թերեւս յուսահատութեամբ շուկա են հանում իրենց ապրանքը:

Մի՞թէ պէտք է այդպէս էլ վարւել եւ գլխից ռադ անել շինականի լծի եղբայր եղանը: Մի՞թէ ներելի է այդ: Մի՞թէ յանցանք չէ այդ: Եթէ մեր ստամոքսի համար այնքան խնամքով ու եռանդով ջղաձգութիւններ ենք անում, մի՞թէ մի փոքր էլ չպիտի մտածենք մեր անասունների համար:

Հիւսիսային Կովկասը մեզ հաց է մատակարարում: Այնտեղ ասում են՝ անասունների կերն այնքան շատ է, որ միլիոնաւոր փթերով փչանում ու փթում է՝ իբրեւ աւելորդ բան:

Մեր գիւղական հասարակությունները պետք է լուրջ կերպով մտահոգեն այդ մասին: Այժմէն պէտք է համախոսականներ կազմեն բոլոր այն գիւղացիք, որոնց անասունները՝ գիտեն, որ մնալու են քաղցած, եւ յատուկ պատգամաւորների միջոցով դիմեն Կովկասեան Կոմիսարիատին եւ խնդրեն, աղաղակ բարձրացնեն, որ հնարաւորութիւն տրւի իրենց Հիւսիսային Կովկասից, Կուբանեան շրջանից եւ այլ խոտաւետ վայրերից անասունների համար խոտ ու յարդ բերելու:

Մենակ անասունների վաճառքի կամ կոտորածի երկիւղը չէ, որ մեզ պիտի սարսափեցնե, այլ եւ նրանց հիւանդութիւնը, որ կարող է համաճարակի բնաւորութեամբ վտանգ սպառնալ նաեւ մարդկանց կեանքին:

Թող անեն՝ քանի ուշ չէ, քանի ձմեռը վրայ չի հասել: Եթէ այսօր, որ դեռ խոտ կայ երկրում եւ անասունը կարողանում է ծառի տերեւներով կերակրւել, այսպէս է, ի՞նչ կը լինի վաղը, երբ խոտի ու յարդի գինը հացի գնից աւելանայ ու չճարւի էլ...

***Միտսար***
***N14 Հինգշաբթի, 3 օգոստոսի Առաջին 1917 տարի***

## Հ.Յ. Դաշնակցություն

- Օգոստ. 18-ին, երեկոյեան ժամի 6-ին, վերին թաղի եկեղեցու բակում եղաւ կանանց միտինգ, որտեղ խօսեցին քաղաքային ընտրութիւնների մասին ընկ. Թումեան, Պ. Մկրտչեան եւ Գ. Տէր-Գրիգորեան: Մասնակցում էին 200-ից աւելի կանայք:

Նոյն երեկոյեան, ժամի 5-ին թեմական դպրոցի դահլիճում եղած կանանց միտինգում խոսեց ընկ. Ե. Իշխանեանը, քաղաքային ընտրութիւնների մասին: Դահլիճը լիքն էր:

- Օգոստ. 19-ին, երեկոյեան Մեղրեցոց եկեղեցական ծխ. դպրոցի դահլիճում, դաշնակցական ընկերների եւ համակրողների խառն ժողովում խօսեցին՝ ընկ. Ա. Կիսիբէկեանը՝ քաղաքային ընտրութիւնների ու Դաշնակցութեան պլատֆորմայի եւ ընկ. Պողոս Մկրտչեանը՝ կօօպերացիայի մասին:

- Օգոստ. 19-ին Ղուկասեան դպրոցի դահլիճում կայացաւ խառն ժողով. խօսեց ընկեր Ե. Իշխանեան Դաշնակցութեան պլատֆորման եւ քաղաքային ընտրութիւնները թեմայով:

Օգոստ. 23-ին ընկ. Թումեանը դասախօսեց ընտրական քառանդամ ֆորմուլայի մասին, ագիտացիոն բիւրոյի թռուցիկ խմբերի կազմակերպիչ ժողովում:

***N19 Կիրակի, 27 օգոստոսի, Առաջին 1917 տարի***

## Այնտեղ, որտեղից երեւում է արծվի մեջքը

Աչքի ընկնելով իր տոկունությամբ, ազատասիրությամբ, հայրենի հողին նվիրվածությամբ, ապրելով լեռների ծերպերին, կարեւորելով իր հավատքը, պահպանելով ու պաշտպանելով իր սրբությունները՝ արցախցին մշտապես բարձր է պահում իր ազգային նկարագիրը: Իսկ ամպերի մեջ ծվարած Կատարո վանքը Դիզափայտ լեռան գագաթին (ավելի քան 2400 մ) դարեր շարունակ ապացուցում է, որ մեր բնությունն ու նրա մասնիկ մարդը հրաշքներ են գործում միասին:

Չնայած Կատարո վանք տանող դժվարամատչելի արահետին՝ այն երբեք այցելուների պակաս չի ունեցել՝ թեկուզ եկեղեցին վերանորոգման, պատմական տեսքը վերականգնելու կարիք ուներ: Այդ աշխատանքին ձեռնամուխ եղան երկու տարի առաջ: Ստեղծվեց նախաձեռնող խումբ (Նարվիկ Առաքելյան, Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյան, Վահան Բաղասյան, Գնել Համբարձումյան): Պետության նախագծով ու խանձաձորցի, այժմ ՌԴ Կազան քաղաքում բնակվող Նարվիկ Առաքելյանի միջոցներով սկսվեց եկեղեցու վերանորոգումը: Ճարտարապետական աշխատանքներն ստանձնեց Սամվել Այվազյանը, ով պատմաճարտարապետական կոթողների վերականգնման մեծ փորձ ունի: Եկեղեցու աշխարհագրական դիրքը նկատի ունենալով՝ մտադրություն կար անհրաժեշտ շինանյութը ուղղաթիռով հասցնել լեռան գագաթը, բայց հետո որոշեցին դա անել ձիերով ու ջորիներով: Եվ անմիջապես շրջակա գյուղերի մի խումբ երիտասարդներ պատրաստակամություն հայտնեցին օգնելու վերականգնողական աշխատանքերին:

Մեզ միշտ զարմացրել է մեր նախնիների կամքն ու տոկունությունը. ո՞նց են կարողացել նման անմատչելի վայրերում կառուցել եկեղեցիներ, վանքեր ու բերդեր: Բայց այդ, երիտասարդներն ապացուցեցին, որ մենք այսօր էլ ունենք կամքի այդ հզոր ուժը: Նրանցից յուրաքանչյուրը 200-300 անգամ բարձրացել է լեռան գագաթը՝ ուղեկցելով շինանյութ տեղափոխող ձիերին: Իսկ գիշերում էին նրանք Քոչի աղբյուրի շրջակայքում տեղակայված վրաններում: Գտնվելով Դիզափայտ լեռան հյուսիսահայաց լանջին անգամ՝ այդ տարածքում կեսօրին արեւը անտանելի կիզիչ է, մինչդեռ երեկոյան կողմ ու գիշերը բավականին ցուրտ է: Աղբյուրը 400 մետր է ցածր եկեղեցուց, մինչդեռ վանք բարձրացող արահետը, որը տեղ-տեղ նույնիսկ խիստ վտանգավոր է, ձգվում է 1600 մետր: Շինարարական աշխատանքների ողջ ընթացքում քարտաշ վարպետ Մարտիրոս Չալումյանը, ով ի դեպ պատմական Գարդմանաց աշխարհի Բանանց գյուղից է ու բնակվում է Քարվաճառում, չի իջել լեռան գագաթից ու գիշերել է եկեղեցու մոտ՝ վրանում:

Ճարտարապետի ու վարպետի պահանջով եկեղեցու վերանորոգման համար օգտագործվել է լավագույն շինանյութը, բայց այնպես, որ պահպանվի եկեղեցու պատմական տեսքը: Աշխատանքի նախապատրաստական շրջանում պարզվել է, որ շինությունը ներսից ծեփապատ էր, բայց քանի որ կիրը որպես շինանյութ օգտագործելու հմտությունը ժամանակի ընթացքում կորել է, ներսի պատերի համար օգտագործվեց ժամանակակից շինանյութ, իսկ կիրն օգտագործվեց արտաքին պատերի համար՝ որպես շաղախ: Տանիքի կղմինդրից մնացած փշրանքերը նույնպես ուսումնասիրելով (11-12-րդ դդ.)՝ պարզվեց, որ այն հնարավոր չէ վերականգնել, ու օգտագործվեց այլ պրոֆիլի կղմինդր՝ դարձյալ բնական հումքից՝ կավից: Եկեղեցու դուռը պատրաստել է տեղացի վարպետ Սասուն Համբարձումյանը: Այն կաղնու փայտից է: Իսկ դռան մետաղական մասերը կոփվել են դարձյալ տեղացի դարբինների ձեռքով:

Ըստ ավանդության՝ եկեղեցին կառուցելու համար ջրի փոխարեն այծի կաթ էին օգտագործում: Վերականգնողական աշխատանքների ժամանակ օրական 200-300 լիտր ջուր էին հասցնում մինչեւ լեռան գագաթը: Ու թեեւ, դարձյալ ըստ ավանդության, Կատարո վանք ուխտագնացության օր է համարվում Նավասարդի 9-ը (օգոստոսի 19), այնուամենայնիվ, մայիսի կեսերից մինչեւ հոկտեմբեր չի դադարում այցելուների հոսքը: Այնտեղ գնում են ոչ միայն տեղացիները: Վերանորոգման աշխատանքները ղեկավարող Գնել Համբարձումյանի խոսքերով՝ ինքն այցելուների է հանդիպել Կանադայից, Ավստրալիայից, Ֆինլանդիայից, Չեխիայից, Իսրայելից, Ռուսաստանից եւ այլ երկրներից: Բոլորին գրավում է չնաշխարհիկ այս գեղեցկությունը. ծիածանի բոլոր գույներով ծաղիկներ ու բուժական հատկություն ունեցող զանազան բույսեր լեռան լանջերին, կենարար օդ, արեւ՝ ափերիդ մեջ, ամպեր՝ իրար փաթաթված, ու մեծ հավատ ներշնչող Կատարո վանք, որտեղից տեսնում ես բարձունքում ճախրող արծվի մեջքը... Աստվածային այս գեղեցկությունը լուծվում, ներծծվում է քո մեջ, երբ խմում ես Քոչի աղբյուրի սառնորակ ջրից:

Իրենց կատարած աշխատանքի համար պետական պարգեւների են արժանացել աշխատանքները նախաձեռնողներն ու իրականացնողները, բայց ամենամեծ պարգեւը՝ շնորհակալությունը, նրանք կստանան գալիք սերունդներից, որոնց կփոխանցվի պատմական այս հուշարձանը՝ որպես անանց ազգային դիմագիծ:

***Աննա Հարությունյան***
***Հադրութ, Այգեստան***

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան